

1650ական թիվերուն էջմիածին այցելութեան՝ ան կը գրէ միւսոնին մասին. «Միւսոնի իւղ կոչուող սպեղանին, հոս կը շինուի, զորդի մը վրայ գրուած սանի մը մէջ խաչուած տունկերէ, կրակը զորդին վնաս չի պատճառեր»: Իսկ այլուր «Նուրչիրվանի կողմէ կառուցուած մեծ վանքին մէջ (էջմիածնի), ամէն տարի քառասուն կամ յիսուն հազար անհաւատներ (իմա հայեր) Քրիստոնեայ բոլոր երկիրներէն հոս կը հաւաքուին, լերան կատարին հին զորդ մը սփռելու հանդէսին ներկայ ըլլալու համար: Ամէն օգտակար եւ բժշկական տունկեր, որոնք այս լեռներուն վրայ կը բուսնին, հաւաքելով կը նետեն այս զորդին վրայ եռացող կաթսայի մը մէջ, այս տունկերը ժամէն աւելի եռացած վիճակի մէջ կը մնան զորդին վրայ, որ որեւէ վնաս չի կրեր, մեծ զարմանք պատճառելով հազարաւոր ականատեսներու: Տունկերը ժողովուրդիս կը բաժնուին, որոնցմէ ոմանք հետերնին իրենց երկիրը կը տանին, իսկ ուրիշներ ալ տեղւոյն վրայ կ'ուտեն: Ես վանականներու հետ այս մասին խօսեցայ, որոնք հաւաստեցին որ զորդը նոյն այն զորդն է՝ որուն վրայ Յիսուս ինկաւ Մարիամի արգանդէն ելած ատեն, երբ ան (Յիսուս) իր տաններկու առաքեալներուն հետ հրէից վախէն այլին մէջ պահուած էր, այս զորդին վրայ եփեցին իրենց տունկերը, (զորդը) ցոյց տալու համար Յիսուսի հրաշագործ կարողութիւնը՝ մեռած մարդ մը կեանքի բերաւ: Նոյն այս զորդին վրայ Յիսուս հրեաներուն ճաշ տուաւ: Գորդը յետոյ անցաւ Նուրչիրվանի ձեռքը, որ երբ այս վանքը կառոյց՝ այն ատեն իրը ընծայ վանքին տուաւ: Երբ Սուլթան Սիւլէյման Երեւանը պաշարելու գնաց՝ երկիցս աղօթեց այս զորդին վրայ: (Գորդը) ոչ բամպակ եւ ոչ ալ մետաքս է, սակայն ունի բազմեանդ գոյներ եւ շատ ծանր է. ես, խեղճ էլվրիս, այն կարծիքէն եմ որ անկիզկի քարէ (ասպեսթոս) շինուած է, քար մը որ Կիպրոս կղզիին մէջ կը գտնուի»⁽²⁾:

Մէկզի ձգելով Նուրչիրվանի եղած սխալ վերագրումները, նոյն իսկ զորդին Յիսուսի հետ երեւակայուած եւ անճիշդ աւանդութիւններ, այսուհանդերձ չենք կրնար մերժել որ հոս ալ, քրիստոնեայ Հայոց կեդրոնին, էջմիածնի մէջ կար սրբացած եւ պաշտամունքի առարկայ զորդ մը: Իբր թէ Յիսուսի անոր վրայ ծննդեամբ՝ կ'երեւայ թէ զորդը նուիրականացած էր յղութեան, մայրութեան համար: Դարձեալ անոր վրայ Յիսուսի ճաշելու աւանդութիւնը՝ զորդը կը նուիրականացնէ իրր ճաշու սրբական «սեղան»:

Բնական է այսօր այդպիսի զորդ մը չկայ էջմիածին: Թէեւ գիտնական բարեկամս, Գարեգին Արք. Յովսէփեան, կը հաւաստէ որ Ժէ դարու սկիզբէն յիշատակարանով հնամաշ զորդ մը կար, նոյնիսկ երբ 1931ին ես էջմիածին կ'այցելէի նման իրերու փնտռութիւն միջոցին: Դժբախտաբար, կ'երեւի թէ իմ փնտռութեան՝ գուցէ երիտասարդ տա-

(2) The Travels of... London, 1850, Vol. II, p. 125.